## 98. ՍՈՒՎԸԾՈԹՈՒՆԸ ՋՈՒԼՈՒՄ ՊԵՆ Ա

*Մին շէնում մին շատ քյասիբ կնեգյ ա ինո՛ւմ ըպրելիս։ Էտ կնգանը վըէչ մին պեն չի ինո՛ւմ, մենակ մին մաղար տղա յա ինո՛ւմ։ Տրա մարթը վըեր մըեռնում ա, տանը վըէչ մին պեն չի թողում։ Մըրուտղա զոռավ կլխըննեն պահում ին՝ օրն ըխշադում ին, օրն օտում։ Տահանց տանն էլ մենակ մին տաշտ կար, վըեր մաշին համ խմոր ին հունցում, համ հացը տինում մաշին, մին պեցուր տըեղա յէլ կախ ին տամ, վըեր յիտըետե հաց յոր օնըեն։*

*Քյասիբ մարթը վըեր գյիդավուչ թա հըրուստըննական ա, սըերտը կըճաքե։*

*Տահանք միշտ ումեդ ին տինո՛ւմ, վըեր պիտի լո՛վանան, խաի յէլ ուրըրնեն անց ին կըցնում։*

*Մին օր էլ էտ կնգանը տղան վըեր ա ինգյո՛ւմ, մըեռնում, մորը թողում չորս պատին ղաթումը։ Խեղճ կնեգյն էնքան լա՛ց ա ինո՛ւմ, վըեր օզում ա թա մըեռնե։ Հնգըեր-հըրեւան կյամ ըն տրան ասում. «Հինչքան լա՛ց իլիր, բոլ ա, ծառան ճողնը վըեր կինգյի, լա՛ց ինիլա՛վ քյեցածը կարել չըս ետ պիրիս, մըեր ծըեռքեն չի, աստված վըեր ուզեցալ ա, խաի յա տըեռալ, թող վըեդը իրեսեն թիթև ինի, էլ ամըեն հինչ անց ա կացալ»։ Մարը թա՝ չէ, վըեր չէ, ես իմ տղաս կուրցընելան ետը էլ հունց ը՞մ ապրում։ Ասում ա, տղըեն մեյդը խըտըտում, կարում չըն նըեստան պուկեն։*

*Վերշը, օխտը օր, օխտը քշեր մարը լա՛ց ա ինո՛ւմ, տըեսնում ա, վըեր սովըծթո՛ւնան պիրա՛նին ճիրեքը քյինա՛մ ա, բո՛կըդան*

աչկն ընգյո՛ւմ ա հացըեն տաշտըեն, էլ տիմձնում չի, ծըեռքը բիղի տաշտը մըեկնում ա, պեցո՛ւր ա ընո՛ւմ, կարում չի հաց յոր օնըե, ասում ա.—Դե վըեր մըռնըլական ըմ, հաց օտըեմ, քուշտանամ, եռնան, էլ խե յը՞մ տընջվիլավ մըեռնում։

Տանը վըեչ մին պեն չի ընո՛ւմ, վըեր տա վըետանը տակեն տինի, պիցրանա տաշտան հաց յոր օնըե։ Քշերեն կեսին տըղեն մեյդը կոխում ա, պիցրա՛նո՛ւմ տաշտան հաց յոր օնում, օտում։

Սովըծոթունը վըեր կա, վըեչ մին պեն չի հըրցնում, վըեչ մար, վըեչ տղա, վըեչ հա՛ր, վըեչ քուր, ախպըեր։ Սովըծոթունը զուլում պեն ա, դո՛շմանըտ տըեսնա վուչ։